դէպի պատշգամբը։ Ավշերոնեան գնդի երաժիշտները նուագելով և ներկայ սմբոխը ուռայով ճանապարհ ձգեցին Կայսերական կառքը դէպի Բագու։

Հետեւեալ օրը հոկտեմբերի 9ին պալատում խնդիրներ ընդունելուց յետոյ՝ Նոցին Կայսերական Մեծութիւնքը օգոստափառ որդոյ հետ առաւօտեան ժամի 10ն բարեհաճեցան ժամանել (Браиловъ мысъ) Բրայիլով զօրանոցը զօրքերին նայելու (смотръ) հասնելով Բրայիլով Նոցին Մեծութիւնքը ուղեւորուեցին դէպի ծովային տաճարը, որի դռանը նոցա ընդունեց (настоятель) աւագ քահանան։ Պատարագից յետոյ Կայսերական Մեծութիւնքը և որդիքը ուղեւորուեցին եկեղեցու հրապարակը, որտեղ կանգնեցրած էին հետեւեալ զինուորական խմբերը՝ —հետեւակ 81րդ Ավշերոնեան գնդի 2 բատալիոն, 82րդ Դաղըստանի գնդի 2րդ բատալիոն, 83րդ Սամուրսկի 2րդ բատալիոն՝ 84րդ Ձիրվանսկի 2րդ բատալիոն, Բագուի տեղացի գունդը 1ին։

Ձիաւոր 1 էյսկու կազախի գունդը 2 բատալիոն՝ 1. 2. և 4. բատարէյ, 21. թնդանօթաձիգներ։ Ընդունելով յայտարարութիւնը (рапортъ) և անցնելով զօրքերի գնդերը, երաժշտի և ուռաների ձայների միջից, Նոցին Կայսերական Մեծութիւնք բարեհաճեցին կանգ առնել գեղեցիկ շինուած յաղթական կամարի մօտ. ուր և բարեհաճեցին հանգստանալ։ Յետոյ բոլոր ներկայ եղող զօրքերը անցան Նոցին Մեծութեանց առաջից և բաղդաւորուեցան արժանաւոր գովասանաց։ Զօրքերին նայելուց յետոյ՝ պալատում պատրաստուած էր նախաճաշ, որին արժանացել էին հրաւիրուել բոլոր Բագուում գտնուող գեներալները և գաւառապետները և Ս. Դէորգի շքանշան ունեցող օֆիցէրները։ Նախաճաշից յետոյ Նոցին Կայսերական Մեծութիւն և օգոստափառ որդիքը և շքախումբը բարեհաճեցին այցելել Նոբելի ընկերութեան գործարանը, որը գտնւում է Սեւ քաղաքում Բագուին կից։

Նոբելի գործարանում օգոստափառ Այցելողներին ընդունեցին Տիկին Նոբել, Տ. Նելլիս, և Պ. Նոբել, որոց առաջինը արժանացաւ մեծ պատուի մատուցանել Կայսրուհուն փունջ ոսկեայ (ажурномъ), Նոցին Մեծութեանց Կայսերական նշանը